

Ֆինանսական հաշվետվություններ և
Անկախ աուդիտորական եզրակացություն
2021թ. դեկտեմբերի 31

«ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ» ՓԲԸ

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն	3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն.....	6
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	8
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	9
Գրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	10
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	12



audit accounting advisory assurance

ՀԱՊ ԶԿ Ռեեստր 1 20 0219
Հասցե Նալբանդյան 50/136, ք Երևան 22,
Հեռախոս +374(10) 52 08 47

www.4aconsulting.am
info@4aconsulting.am

CAA NGO Register 1 20 0219
Address Nalbandyan 50/136, Yerevan, RA
Telephone +374(10) 52 08 47

Անկախ աուդիտորական եզրակացություն

“Հայաերոնավիգացիա” փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերին և խորհրդին

Կարծիք

Մեր կողմից իրականացվել է “Հայաերոնավիգացիա” փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կից ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունները, նույն ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և այլ ծանոթագրություններ:

Մեր կարծիքով կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ “Հայաերոնավիգացիա” ՓԲԸ ֆինանսական վիճակը և նույն ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքն ու դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրեցինք աուդիտի միջազգային ստանդարտների (ԱՄՍ) համաձայն: Այդ ստանդարտներով սահմանված մեր պարտականությունները ներկայացված են “Աուդիտորի պարտականությունները ֆինանսական հաշվետվությունների աուդիտի վերաբերյալ” հատվածում: Հաշվապահների Վարքագծի Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՎՄՄԽ) կողմից հաստատված “Ղրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրքի” (ՊՀՎ կարգ) համաձայն մենք պահպանել ենք մեր անկախությունը Ընկերության նկատմամբ և պահպանել ենք էթիկայի այլ սկզբունքների նկատմամբ մեր պարտականությունները համաձայն այդ ստանդարտների և ՀՎՄՄԽ Վարքագրքի:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Այլ հանգամանք

Ընկերության 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այս ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացվել է այլ աուդիտորական կազմակերպության կողմից, որի 2021թ. մարտի 31-ի եզրակացությունում արտահայտվել է չձևափոխված կարծիք նշված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է սույն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (ՖՀՄՍ) համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական

հաշվետվություններ, որոնք ազատ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելու ընթացքում ղեկավարությունը պարտավոր է գնահատել Ընկերության գործունեության անընդհատությունը, բացահայտելու գործունեության անընդհատության վերաբերյալ խնդիրները և առաջնորդվել հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքով, եթե ղեկավարությունը չի պատրաստվում լուծարել ընկերությունը կամ դադարեցնել գործունեությունը կամ չունի այլընտրանք քան գործունեության դադարեցումն է:

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է ընկերության ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվություն

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում, թե արդյոք ֆինանսական հաշվետվությունները ամբողջությամբ վերցրած, բոլոր էական առումներով գերծ են սխալներից՝ պայմանավորված խարդախություններով կամ բացթողումներով, և պատրաստել աուդիտորական եզրակացություն, որը ներառում է մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը ամենաբարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ համաձայն աուդիտը մշտապես կհայտնաբերի էական սխալները և բացթողումները երբ դրանք առկա են: Մխայները կարող են առաջանալ խարդախության կամ բացթողումների հետևանքով և համարվում են էական, եթե առանձին կամ միասին վերցրած կարող են ազդել օգտագործողների տնտեսական որոշումների վրա, որոնք կայացվում են հիմք ընդունելով ֆինանսական հաշվետվությունները:

Աուդիտի ընթացքում, որն իրականացվել է ԱՄՄ համաձայն, մենք առաջնորդվել ենք մասնագիտական դատողությամբ և պրոֆեսիոնալ կասկածամտությամբ: Մենք նաև.

- Հայտնաբերել և գնահատել ենք էական սխալների ռիսկերը ֆինանսական հաշվետվություններում՝ պայմանավորված խարդախություններով և բացթողումներով, նախագծել և իրականացրել ենք աուդիտորական ընթացակարգեր այս ռիսկերին պատասխանելու նպատակով և ձեռք ենք բերել բավարար և համապատասխան աուդիտորական ապացույցներ մեր կարծիքը արտահայտելու համար: Խարդախության հետևանքով առաջացած սխալի չհայտնաբերման ռիսկը ավելի բարձր է քան բացթողման հետևանքով առաջացածինը, քանի որ խարդախությունը կարող է ընդգրկել գաղտնի պայմանավորվածություններ, խարդախություն, նպատակային բացթողում, յուրացում կամ ներքին վերահսկողական նորմերի շրջանցում:
- Պատկերացում ենք կազմել ներքին վերահսկողության համակարգի վերաբերյալ, որպեսզի նախագծենք աուդիտորական ընթացակարգերը սովյալ հանգամանքներին համապատասխան, բայց ոչ կարծիք արտահայտել Ընկերության ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ:
- Գնահատել ենք Ընկերության ղեկավարության կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխանությունը և հաշվապահական ողջամիտ գնահատումները և կից բացահայտումները:
- Որոշել ենք ղեկավարության կողմից օգտագործված հաշվապահական հաշվառման գործունեության անընդհատության սկզբունքի օգտագործման համապատասխանությունը՝ ելնելով հավաքագրված աուդիտորական ապացույցներից, եղել են արդյոք էական անորոշություններ, որոնք կարող են առաջացնել կասկածներ, այն մասին, որ Ընկերությունը կարող է ունենալ խնդիրներ գործունեության անընդհատության հետ կապված: Եթե կան նման անորոշություններ, ապա մենք

պարտավոր ենք մեր եզրակացությունում օգտագործողների ուշադրությունը հրավիրել այդ բացահայտումներին, իսկ եթե այդ բացահայտումները բավարար չեն ապա պարտավոր ենք ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են աուդիտորական ապացույցների վրա, որոնք ձեռք են բերվել մինչև մեր կողմից աուդիտորական եզրակացություն տալու ամսաթիվը: Սակայն հետագա դեպքերը և հանգամանքները կարող են հանգեցնել Ընկերությանը դադարեցնել գործունեության անընդհատությունը:

- **Գնահատել ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր բնութագիրը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, և թե արդյոք ֆինանսական հաշվետվություններում ներկայացվում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադարձությունները այսպես, որպեսզի համարվի ճշմարիտ ներկայացում:**

Մենք ծանուցել ենք ղեկավարությանը աուդիտի շրջանակների, ժամանակացույցի և կարևոր բացահայտումների մասին՝ ներառյալ ներքին վերահսկողության համակարգում առկա թերությունների մասին, որոնք մենք հայտնաբերել ենք աուդիտի ընթացքում:

Մենք նաև ծանուցել ենք ղեկավարությանը, որ առաջնորդվել ենք էթիկայի դրույթներով, կապված անկախության հետ և բացահայտել ենք նրանց բոլոր փոխհարաբերությունները, որոնք կարելի է ողջամտորեն մտածել, որ կկրեն մեր հարաբերությունները և համայատասխան երաշխիքները, որտեղ որ կիրառելի է:

Այն բոլոր դիտարկումներից, որոնք քննարկվել են ղեկավարության հետ, ընտրվել են նրանք, որոնք առավել կարևոր են ընթացիկ ժամականաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում և համարվում են, որպես հիմնական աուդիտորական հիմնահարցեր (<Ա>): Մենք ներկայացրել ենք այդ խնդիրները աուդիտորական եզրակացությունում, եթե << օրենսդրությամբ և սահմանված կարգերով չի արգելում հրապարակայնորեն բացահայտումը կամ, հազվադեպ դեպքերում, մենք որոշում ենք, որ նման բացահայտման դեպքում հասարակությանը հասցված վնասները ավելին կլինեն, քան նման բացահայտման օգուտները:

Աուդիտորական առաջադրանքի, որի արդյունքը այս աուդիտորական եզրակացությունն է, ղեկավարը Անիկ Մարտիրոսյանն է:

23 մարտի 2022թ.

Անիկ Մարտիրոսյան

Տնօրեն-բաժնետեր/առաջադրանքի ղեկավար



A handwritten signature in blue ink, appearing to be 'Ales' or similar, written over the stamp.

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն (ըստ բնույթի)

Հազար դրամ	ԾՃՔ.	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հանախորդների հետ պայմանագրերից հասույթ	4	5,297,082	2,291,274
Աշխատավարձ և հատուցումներ աշխատակիցներին	5	(2,991,878)	(2,548,050)
Ծառայություններ և նյութեր		(88,564)	(75,190)
Մաշվածություն և ամորտիզացիա	12,13,14	(615,584)	(610,419)
Գործուղման ծախսեր		(101,261)	(29,171)
Բուժսպասարկում		(33,742)	(34,677)
Վերապատրաստման ծախսեր		(105,195)	(32,374)
Հեռահաղորդակցության ծախսեր		(25,684)	(24,133)
Անհուսալի դեբիտորական պարտքերի դուրսգրման ծախսեր		(3,953)	(20,751)
Անդամավճարների գծով ծախսեր	6	(181,686)	(145,130)
Գրասենյակային ծախսեր		(10,841)	(11,273)
Այլ ծախսեր	7	(314,265)	(203,574)
Այլ եկամուտ	8	190,295	62,716
Գործառնական գործունեությունից շահույթ/(վնաս)		1,014,724	(1,380,752)
Ֆինանսական եկամուտ	9	19,532	57,380
Ֆինանսական ծախսեր	9	-	(62)
Այլ ֆինանսական հոդվածներ	10	(401,754)	367,864
Շահույթ/(վնաս) մինչև հարկերը		632,502	(955,570)
Շահութահարկի գծով ծախս	11	(178,381)	68,476
Տարվա շահույթ/(վնաս)		454,121	(887,094)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ			
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ հարկումից հետո		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ		454,121	(887,094)

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են Ընկերության ղեկավարության կողմից 2022թ. մարտի 23-ին՝

Արթուր Գասպարյան
Գլխավոր տնօրեն

Էլիզա Գասպարյան
Գլխավոր հաշվապահ

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 41-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ՝



Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն ըստ գործառույթի (ըստ գործառույթի)

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
	Ծնք.	
Հանախորդների հետ պայմանագրերից հասույթ	5,297,082	2,291,274
Վաճառքի ինքնարժեք	(3,678,827)	(2,770,365)
Համախառն շահույթ	1,618,255	(479,091)
Այլ եկամուտ	190,295	62,716
Վարչական ծախսեր	(305,390)	(316,573)
Այլ գործառնական ծախսեր	(488,436)	(647,804)
Գործառնական գործունեությունից շահույթ	1,014,724	(1,380,752)
Ֆինանսական եկամուտ	19,532	57,380
Ֆինանսական ծախս	-	(62)
Այլ ֆինանսական հոդվածներ	(401,754)	367,864
Տարվա շահույթ	632,502	(955,570)
Շահութահարկի գծով ծախս	(178,381)	68,476
Տարվա շահույթ/(վնաս)	454,121	(887,094)
<i>Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ</i>		
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ հարկումից հետո	-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ	454,121	(887,094)

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 41-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ		2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ	Ծնք.		
<i>Ոչ ընթացիկ ակտիվներ</i>			
Հիմնական միջոցներ	12	4,739,314	4,577,493
Օգտագործման իրավունքի ձեռք բերված ակտիվներ	13	-	-
Ոչ նյութական ակտիվներ	14	118,171	146,866
Հետաձգված հարկային ակտիվներ	15	8,953	5,990
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվներ ձեռք բերելու համար		-	6,586
		4,866,438	4,736,935
<i>Ընթացիկ ակտիվներ</i>			
Պաշարներ	16	84,308	94,968
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	17	1,246,052	1,230,294
Դրամական միջոցներ և համարժեքներ	18	1,528,114	969,599
		2,858,474	2,294,861
Ընդամենը ակտիվներ		7,724,912	7,031,796
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
<i>Կապիտալ և պահուստներ</i>			
Բաժնետիրական կապիտալ	19	2,601,880	2,660,000
Պահուստային կապիտալ		399,000	399,000
Կուտակված շահույթ		3,653,599	3,288,336
		6,654,479	6,347,336
<i>Ոչ ընթացիկ պարտավորություններ</i>			
Հետաձգված հարկային պարտավորություններ	15	319,148	371,896
Կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով	20	-	-
		319,148	371,896
<i>Ընթացիկ պարտավորություններ</i>			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	21	480,700	271,785
Կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով	20	-	-
Պահուստներ	22	49,738	32,506
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություն		220,847	8,273
		751,285	312,564
Ընդամենը պարտավորություններ		1,070,433	684,460
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		7,724,912	7,031,796

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 41-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Բաժնե- տիրական կապիտալ	Պահու- տային կապիտալ	Կուտակված շահույթ	Ընդամենը
2020թ. հունվարի 1-ի դրությամբ	2,660,000	399,000	6,162,991	9,221,991
Տարվա շահույթ	-	-	(887,094)	(887,094)
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	-	-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	-	(887,094)	(887,094)
Շահաբաժիններ	-	-	(1,987,561)	(1,987,561)
Գործարքներ սեփականատերերի հետ	-	-	(1,987,561)	(1,987,561)
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,660,000	399,000	3,288,336	6,347,336
Տարվա շահույթ	-	-	454,121	454,121
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	-	-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	-	454,121	454,121
Շահաբաժիններ	-	-	-	-
Գործարքներ սեփականատերերի հետ	(58,120)	-	(88,858)	(146,978)
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,601,880	399,000	3,653,599	6,654,479

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 41-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տարվա շահույթ՝ <i>ճշգրտումներ՝</i>	454,121	(887,094)
Մաշվածություն և ամորտիզացիա	615,584	610,419
Հիմնական միջոցների օտարումից (օգուտ)/վնաս	(12,795)	(1,432)
Շահութահարկի գծով ծախս/(փոխհատուցում)	178,381	(68,476)
Ֆինանսական եկամուտ	(19,532)	(57,380)
Ֆինանսական ծախս	-	62
Կասկածելի դեբիտորական պարտքերի պահուստի շարժ	3,953	20,751
Անհուսալի դեբիտորական պարտքի մարում	(2,086)	-
Անհուսալի կրեդիտորական պարտքի դուրս գրում	(262)	(965)
Փոխարժեքային տարբերությունից (օգուտ)/վնաս	401,754	(367,864)
Գործառնական շահույթ/(վնաս) նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները	1,619,118	(751,979)
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն	(15,758)	(150,053)
Պաշարների փոփոխություն	10,660	(16,865)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն	421,489	(166,961)
Պահուստների փոփոխություն	17,232	(10,171)
Գործառնական գործունեությունից ստացված/ (գործունեության համար օգտագործված) դրամական միջոցներ	2,052,741	(1,096,029)
Վճարված շահութահարկ	(20,549)	(414,884)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	2,032,192	(1,510,913)

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տրված կանխավճարներ	-	(6,586)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(828,095)	(715,854)
Հիմնական միջոցների վաճառքից մուտքեր	-	-
Ստացված տոկոսային եկամուտ	19,532	57,380
Տրված փոխառությունների մարումներ	-	-
<i>Ներդրումային գործունեությունից ստացված(գործունեության համար օգտագործված) գուտ դրամական միջոցներ</i>	(808,563)	(665,060)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով	-	(863)
Վճարված շահարաժիհներ	-	(1,987,561)
<i>Ֆինանսական գործունեությունից ստացված/(գործունեության համար օգտագործված) գուտ դրամական միջոցներ</i>	-	(1,988,424)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների գուտ աճ/(նվազում)	1,223,629	(4,164,397)
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	(665,114)	419,222
Դրամական միջոցների և դրանց համարժեքները տարեսկզբի դրությամբ	969,599	4,714,774
Դրամական միջոցների և դրանց համարժեքներ տարեվերջի դրությամբ	1,528,114	969,599

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 41-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական հաշվետվություններին ծանոթագրություններ

կից

1. Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Հայաերոմավիգացիա» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) գրանցվել է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից և ստացել իրավաբանական անձի պետական գրանցման վկայական 1997թ. Օգոստոսի 7-ին:

Ընկերությունն իրավաբանական անձ համարվող, շահույթ ստանալու նպատակ հետապնդող (առևտրային) կազմակերպություն է, որը ստեղծվել է և իր գործունեության ընթացքում ղեկավարվում է «Քաղաքացիական օրենսգրքին», «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքին, գործող այլ իրավական ակտերին և կանոնադրությանը համապատասխան:

Ընկերության ստեղծման նպատակը տնտեսական գործունեություն (այդ թվում՝ ՀՀ օդային տարածքի օգտագործման և ՀՀ միջազգային պարտավորությունների ու ՀՀ-ում գործող պահանջներին համաձայն ավիացիայի բնագավառում կիրառվող տեխնիկական սարքավորումների զարգացման ապահովման) իրականացնելու ճանապարհով շահույթի ստացումն է:

Ընկերության գործունեության հիմնական տեսակներն են.

- ՀՀ օդային տարածքում օդային երթևեկության կազմակերպում և ապահովում:
- ՀՀ օդային տարածքում իրականացվող չվերթերի աերոնավիագացիոն տեղեկատվության ապահովում:
- Թռիչքների ռադիոտեխնիկական ապահովում և կապի սարքավորումների տեխնիկական ներդրում, ապաստարկում և այլն:
- Իր պատասխանատվության տակ գտնվող օդային տարածքում թռիչքների կառավարում:
- Սահմանված կարգով թռիչքների կազմակերպման ապահովում:

Ընկերության աշխատակիցների միջին ցուցակային թվաքանակն 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է՝ 276 (2020թ. դեկտեմբերի 31-ին՝ 299 աշխատակից):

Կորպորատիվ կառուցվածքը

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 2,601,880 հազար (Երկու միլիարդ վեց հարյուր մեկ հազար ութ հարյուր ութսուն միլիոն) ՀՀ դրամ, որը կազմում է 260,188 սովորական բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 10,000 հազար ՀՀ դրամ: Ընկերության կանոնադրական կապիտալի բոլոր բաժնետոմսերը տեղաբաշխված են և լրիվ վճարված:

Ընկերության միակ բաժնետերը Հայաստանի Հանրապետությունն է: Վերջինս իրականացնում է բաժնետոմսերի կառավարումը ՀՀ տարածքային և ենթակառուցվածքների նախարարության Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի կողմից (այսուհետ՝ ՔԱԿ):

Ընկերության կառավարման բարձրագույն մարմինն Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովն է, որն ունի Ընկերության կառավարման և գործունեության ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք:

Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը, բացառությամբ այն հարցերի, որոնք կանոնադրությամբ կամ օրենքով վերապահված են Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կամ գլխավոր տնօրենի իրավասությանը, իրականացնում է Ընկերության խորհուրդը: Խորհուրդը կազմված է 7 անդամներից: Խորհրդի նախագահի համար սահմանված է եռամսյակային պարգևավճար՝ Ընկերության հաշվետու գործունեության դրական արդյունքի դեպքում:

Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն (գործառնական գործունեությունը) իրականացնում է Ընկերության գլխավոր տնօրենը:

Խորհրդի կազմը ներկայացված է ստորև՝

Արմեն Ավանեսյան
Խորհրդի նախագահ

Արթուր Գասպարյան
Խորհրդի գործադիր անդամ

Արամ Թունյան
Խորհրդի գործադիր անդամ

Սուրեն Կոչեցյան
Խորհրդի ոչ գործադիր անդամ

Հայսեր Գասպարյան
Խորհրդի ոչ գործադիր անդամ

Անաստաս Աղազարյան
Խորհրդի անկախ անդամ

Կարեն Վերմիշյան
Խորհրդի ոչ գործադիր անդամ:

2. Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄԽ) կողմից:

2.2 Դանաշման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք ներկայացված են ապագա դրամական հոսքերի ներկա զեղչված արժեքով:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Ընկերության գործառնական ֆունկցիոնալ արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ընկերության գործարքների տնտեսական բովանդակությունը:

Ընկերության հասույթի 95%-ից ավելին Եվրոյով գործարքներից են առաջանում, սակայն Ընկերության ծախսերը և ծախսումների 95%-ը ՀՀ դրամով է առաջանում: Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել օգտակար է Ընկերության ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Ընկերության ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա: Առավել մեծ դատողություն պահանջող և

բարդություն ներկայացնող էական ոլորտները, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրություններն ու գնահատումներն էական են ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են ֆինանսական հաշվետվություններին կից 23 ծանոթագրություն:

2.5 Ընկերության կողմից ընդունված նոր և փոփոխված ՖՀՄՍ ստանդարտներ, որոնք ընդունվել են ընթացիկ տարում

Հրապարակվել են որոշ հաշվապահական հաշվառման նոր ստանդարտ(ներ) և մեկնաբանություններ, որոնք պարտադիր չեն 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող ժամանակաշրջանի հաշվետվությունների պատրաստման համար և վաղաժամ չեն կիրառվել Ընկերության կողմից: Նոր ընդունված հաշվապահական ստանդարտների և մեկնաբանությունների ազդեցության գնահատումը Ընկերության կողմից ներկայացված է ստորև՝

Ստանդարտ	Ստանդարտի կամ մեկնաբանության անունը	Տվյալ ամսաթվին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար կիրառելի
ՖՀՄՍ 16	COVID-19-ի հետ կապված վարձակալության արտոնություններ 2021թ. հունիսի 30-ից հետո	1 ապրիլի 2021թ.
ՖՀՄՍ 3	Հղումներ հայեցակարգային հիմունքներին (ՀՀՄՍ 3 փոփոխություններ)	1 հունվարի 2022թ.
ՀՀՄՍ 16	Մուտքեր նախքան նախատեսված օգտագործումը (ՀՀՄՍ 16 փոփոխություններ)	1 հունվարի 2022թ.
ՀՀՄՍ 37	Անբարենպաստ պայմանագրեր. Պայմանագրի կատարման ծախսումներ (ՀՀՄՍ 37 փոփոխություններ)	1 հունվարի 2022թ.
ՖՀՄՍ 1, ՖՀՄՍ 9, ՀՀՄՍ 41, ՖՀՄՍ 16	2018-2020թթ. ՖՀՄՍ-ների տարեկան բարեփոխումներ (ՖՀՄՍ 1, ՖՀՄՍ 9, ՀՀՄՍ 41, ՖՀՄՍ 16 փոփոխություններ)	1 հունվարի 2022թ.
ՖՀՄՍ 17	Ապահովագրության պայմանագրեր	1 հունվարի 2023թ.
ՖՀՄՍ 4	ՖՀՄՍ 9-ի կիրառումից ժամանակավոր ազատման երկարացում (ՖՀՄՍ 4 փոփոխություններ)	1 հունվարի 2023թ.
ՖՀՄՍ 17	ՖՀՄՍ 17-ի և ՖՀՄՍ 9-ի սկզբնական կիրառում – համադրելի տեղեկատվություն (ՖՀՄՍ 17 փոփոխություն)	1 հունվարի 2023թ.
ՀՀՄՍ 1	Պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ (ՀՀՄՍ 1 փոփոխություն)	1 հունվարի 2023թ.
ՀՀՄՍ 12	Մեկ գործարքից առաջացող ակտիվներին և պարտավորություններին վերաբերող հետաձգված հարկ (ՀՀՄՍ 12 փոփոխություններ)	1 հունվարի 2023թ.

Ընկերության ղեկավարությունը չի ակնկալում, որ այս փոփոխությունների կիրառումը էական ազդեցություն կունենան Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1 Արտարժույթ

Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Ընկերության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված միջին փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված միջին փոխարժեքը: Իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով սահմանված ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են գործարքի օրվա դրությամբ գործող միջին փոխարժեքով: Ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում: Մտորև ներկայացված են ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված միջին փոխարժեքները.

	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Եվրո	542.61	641.11
ԱՄՆ դոլար	480.14	522.59
Բեժ Բրիտանական ֆունտ	646.17	709.47
Ռուսական ռուբլի	6.42	7.02

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են տարվա շահույթում կամ վնասում: Իրական արժեքով արտահայտված ոչ դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ներառվում են տարվա շահույթում կամ վնասում, բացառությամբ այն ոչ դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած տարբերությունների, որոնց վերաբերող շահույթը կամ վնասը ճանաչվում է ուղղակիորեն սեփական կապիտալում: Նման ոչ դրամային հոդվածների դեպքում շահույթի կամ վնասի ցանկացած փոխարժեքային քաղաքիչ նույնպես ճանաչվում է ուղղակիորեն սեփական կապիտալում:

3.2 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ համաձայն կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը քաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր քաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցները, որոնք պահվում են վարձակալության տալու կամ վարչական, կամ դեռևս անորոշ նպատակով, հաշվառվում են սկզբնական արժեքով՝ համաձայն արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ուղղակիորեն վերագրելի ծախսումները, տեղանքի նախապատրաստման, տեղակայման ծախսումները, մասնագիտական վճարները, իսկ որակավորվող ակտիվի դեպքում՝ նաև կապիտալացման ենթակա փոխառության ծախսումները՝ համաձայն Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության: Վարձակալական գույք հանդիսացող շենքերը նույնպես ընդգրկվում են հիմնական միջոցներում, եթե դրանք ստացվել են ֆինանսական վարձակալությամբ: Նման ակտիվների մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի ակնկալվող օգտակար ծառայության ընթացքում (որը որոշվում է՝ համեմատելով սեփական համանման ակտիվների հետ) կամ վարձակալության ժամկետի ընթացքում, եթե վերջինս ավելի կարճ է:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Հողամասեր, շենքեր և շինություններ	3 - 67 տարի
Կառուցվածքներ և փոխանցող հարմարանքներ	1 - 35 տարի
Մեքենաներ, սարքավորումներ և տրանսպորտային միջոցներ	1 - 24 տարի
Արտադրական, տնտեսական գույք և այլ	1 - 35 տարի :

3.3 Վարձակալված ակտիվներ

Ընկերությունը նախ և առաջ գնահատում է, արդյոք պայմանագիրը հանդիսանում կամ պարունակում է վարձակալություն: Այսինքն, եթե պայմանագրով իդենտիֆիկացվող ակտիվի օգտագործման իրավունքը որոշակի ժամանակահատվածով փոխանցվում է փոհատուցման դիմաց:

Ընկերությունը որպես վարձակալ

Ընկերությունը կիրառում է միանման մոտեցում բոլոր վարձակալությունների համար, բացառությամբ կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալության: Ընկերությունը ճանաչում է պարտավորություն վարձակալության վճարները՝ Կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով, որպեսզի վճարի վարձավճարները և Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները, որը իրենից ներկայացնում է տվյալ ակտիվի օգտագործման իրավունքը:

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

Ընկերությունը օգտագործման իրավունքի ձևով ակտիվները ճանաչում է վարձակալության սկզբում (այսինքն՝ այն ամսաթվով, երբ տվյալ ակտիվը մատչելի է օգտագործման համար): Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները, և ճշգրտվում են կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով պարտավորության վարաչափումից: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների սկզբնական արժեքը ներառում է պարտավորություններում ճանաչված կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով արժեքը, առաջացող սկզբնական ուղղակի ծախսումները և վարձավճարները, որոնք կատարվել են մինչև վարձակալությունը սկսելու ամսաթիվը կամ այդ ամսաթվին կատարված վարձավճարները, հանած վարձակալության գծով ստացված ցանկացած արտոնություններ կամ գեղչեր: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Սարքավորումներ	- 5 տարի :
----------------	------------

Այն դեպքում, երբ վարձակալած ակտիվի սեփականության իրավունքը վարձակալության պայմանագրի ավարտին՝ վերջում, անցնում է Ընկերությանը կամ սկզբնական արժեքը արտացոլում է տվյալ վարձակալած ակտիվի գնման օպցիոն, ապա մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի գնահատված օգտակար ծառայության ժամկետով: գտագործման իրավունքի ձևով ակտիվները նույնպես պետք է արժեզրկման ստուգման (թեպօ) ենթարկվեն:

3.4 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Ընկերության կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում:

Ոչ նյութական ակտիվների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Համակարգչային ծրագրեր	3 - 10 տարի
Լիցենզիաներ և արտոնագրեր	3 - 10 տարի
Այլ ոչ նյութական ակտիվներ	8 - 10 տարի

3.5 Պաշարներ

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման գուտ արժեքից նվազագույնով: Իրացման գուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համարման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է՝ օգտագործելով միջին կշռվածի մեթոդը, և ներառում է պաշարների ձեռքբերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

3.6 Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և ապահանջում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապահանջվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորությունները ապահանջվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը և սկզբնական չափումը

Բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն առևտրային դեբիտորական պարտքերի, որոնք չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ և չափվում են գործարքի գնով՝ ՖՀՄՄ 15-ի պահանջներին համապատասխան:

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- ամորտիզացված արժեքով հաշվառվող,
- իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- իրական արժեքով չափվող՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով:

Դասակարգումը բնորոշվում է հետևյալ երկու պարագայով.

- Ընկերության ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը,
- Ֆինանսական ակտիվի՝ պայմանագրային դրամական հոսքերի հատկանիշները:

Ֆինանսական ակտիվներին առնչվող ամբողջ եկամուտը և ծախսերը, որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, արտացոլված են ֆինանսական ծախսերում, ֆինանսական եկամուտում կամ այլ ֆինանսական արդյունքներում, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման, որը արտացոլված է այլ ծախսերում: Ընկերության ֆինանսական ակտիվները, ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություն թիվ 24.2-ում:

Ֆինանսական ակտիվների հետագա չափումը

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, եթե ակտիվները բավարարում են հետևյալ պայմաններին.

- դրանք պահվում են այն բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները և հավաքագրել դրանց հետ կապված պայմանագրային դրամական հոսքերը,
- ֆինանսական ակտիվների պայմանագրային պայմաններն առաջացնում են դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ:

Սկզբնական ճանաչումից հետո այս ակտիվները չափվում են ամորտիզացված արժեքով կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այն դեպքերում, երբ գեղչման ազդեցությունը աննշան է, գեղչում չի կատարվում: Ֆինանսական գործիքների այս կատեգորիայում են դասակարգվում Ընկերության դրամական միջոցները և դրանց համարժեքները, առևտրային դեբիտորական պարտքերը և այլ դեբիտորական պարտքերի մեծամասնությունը:

Ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով

Ֆինանսական ակտիվները, որոնք պահվում են «հավաքագրման համար պահվող կամ «հավաքագրման և վաճառքի համար պահվող բիզնես մոդելներից տարբեր մոդելի շրջանակներում, դասակարգվում են որպես իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով: հետագայում, անկախ բիզնես մոդելից, բոլոր այն ֆինանսական ակտիվները, որոնց պայմանագրային դրամական հոսքերը չեն հանդիսանում միայն մայր գումարի և հաշվարկված տոկոսի մարում, հաշվառվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով: Բոլոր ածանցյալ ֆինանսական գործիքները դասակարգվում են այս կատեգորիայում, բացառությամբ հեջավորման գործիքների, որոնց համար գործում են հեջավորման հաշվառմանը ներկայացվող պահանջները:

Այս կատեգորիան ներառում է նայև ներդրումը սեփական կապիտալում: Ընկերությունը հաշվառում է ներդրումը իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով և ցուցակված սեփական կապիտալի բաժնետոմսերը հաշվառել իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքում: Իրական արժեքը որոշվել է ՖՀՄՍ 9-ի պահանջներին համապատասխան, որը չի թույլ տալիս սկզբնական արժեքով չափումը:

Այս կատեգորիայում դասակարգված ակտիվները չափվում են իրական արժեքով՝ օգուտը կամ կորուստները ճանաչելով շահույթում կամ վնասում: Այս կատեգորիայում դասակարգված ֆինանսական ակտիվների իրական արժեքը որոշվում է գործող շուկայի գործարքներին հղում կատարելով կամ, այն պարագայում, երբ առկա չէ գործող շուկա՝ կիրառելով գնահատման մեթոդ:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Ակնկալվող պարտքային կորուստները ճանաչելու համար ՖՀՄՍ 9-ում արժեզրկմանը ներկայացված պահանջներում օգտագործվում է ապագային առնչվող տեղեկատվություն՝ «Ակնկալվող պարտքային կորուստների մոդելը: ՖՀՄՍ 9-ի պահանջների շրջանակներում ընդգրկվող գործիքները ներառում են տրված վարկերը և փոխառային տիպի այլ ֆինանսական ակտիվները, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով և իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքում, առևտրային դեբիտորական պարտքերը, պայմանագրային

ակտիվները որոնք ճանաչվել և չափվել են ՖՀՄՄ 15-ի համաձայն և վարկային պարտավորությունները և որոշ ֆինանսական երաշխավորության պայմանագրերը, որոնք չեն չափվում իրական արժեքով՝ շահույթում կամ վնասում:

Պարտքային կորուստների ճանաչումը այլևս կախված չէ Ընկերության պարտքային կորուստը բնորոշող իրադարձության սկզբնական բացահայտումից: Փոխարենը, պարտքային ռիսկը գնահատելիս և ակնկալվող պարտքային կորուստները չափելիս Ընկերությունը դիտարկում է տեղեկատվության ավելի ընդլայնված զանգված՝ ներառյալ անցյալ իրադարձությունները, ընթացիկ պայմանները, խելամիտ և հիմնավորված կանխատեսումները, որոնք ազդեցություն ունեն գործիքի ապագա դրամական հոսքերի ակնկալվող հավաքագրելիության վրա:

Առաջընթաց գնահատման մոտեցումը կիրառելիս առանձնացվում են հետևյալները.

- ֆինանսական գործիքներ, որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն չեն վատթարացել կամ ունեն ցածր պարտքային ռիսկ (Փուլ 1) և
 - ֆինանսական գործիքներ, որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն վատթարացել են և որոնց պարտքային ռիսկը ցածր չէ (Փուլ 2):
- Փուլ 3-ը ընդգրկում է այն ֆինանսական ակտիվները, որոնց մասով հաշվետու ամսաթվի դրությամբ առկա են արժեզրկման օբյեկտիվ ապացույցներ:

Առաջին դասի ակտիվների համար ճանաչվում են «12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները, մինչդեռ «գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստները ճանաչվում են երկրորդ դասի ակտիվների համար: Ակնկալվող պարտքային կորուստների չափումը որոշվում է ֆինանսական գործիքի ակնկալվող գործողության ժամկետի պարտքային կորուստների հավանականության միջին կշռված գնահատումով:

Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր և պայմանագրային ակտիվներ

Ընկերությունը հաշվառում է առևտրային և այլ դեբիտորական պարտքերը և պայմանագրային ակտիվները օգտվելով պարզեցված մոտեցումից և կորստի գծով պահուստը ձևակերպում է որպես գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ: Դրանք իրենցից ներկայացնում են պայմանագրային դրամական հոսքերի ակնկալվող դադարեցումները՝ հաշվի առնելով ֆինանսական ակտիվի գործողության ժամկետի ամբողջ ընթացքում ցանկացած պահի չմարվելու հնարավորությունը: Ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկելիս Ընկերությունն օգտագործում է պահուստի մատրիցան՝ ելնելով պատմական փորձից, արտաքին ցուցանիշներից և ապագային առնչվող տեղեկատվությունից:

Ընկերությունը գնահատում է առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկումը հավաքական հիմունքով, քանի որ դրանք ունեն պարտքային ռիսկի ընդհանուր բնորոշումներ, դրանք խմբավորվել են՝ ելնելով ժամկետանց օրերից:

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և չափումը

Ընկերության ֆինանսական պարտավորությունները ներառում են առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը: Ընկերության ֆինանսական պարտավորությունները, ըստ կատեգորիաների, ներկայացված են ծանոթագրություն թիվ 24.2-ում:

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

3.7 Սեփական կապիտալ

Ընկերության կողմից թողարկվող կապիտալի գործիքները հաշվառվում են անվանական արժեքով: Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, երբ դրանք հայտարարվում են:

3.8 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը: Այսպիսի հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չեն ճանաչվում, եթե ժամանակավոր տարբերությունն առաջանում է գույքի սկզբնական ճանաչումից կամ այլ ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական շահույթի, ոչ էլ՝ հարկվող շահույթի վրա (բացի ձեռնարկատիրական գործունեության միավորումներից):

Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են հարկվող ժամանակավոր տարբերությունների համար, որոնք կապված են դուստր ընկերություններում և ասոցիացված կազմակերպություններում ներդրումների ու համատեղ ձեռնարկումներում մասնակցությունների հետ, բացառությամբ այն դեպքերի, որտեղ Ընկերությունը ի վիճակի է վերահսկելու ժամանակավոր տարբերության հակադարձումը և հավանական է, որ ժամանակավոր տարբերությունը չի հակադարձվի տեսանելի ապագայում: Նմանատիպ ներդրումների և մասնակցությունների հետ կապված նվազեցվող ժամանակավոր տարբերություններից առաջացող հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են միայն այն չափով, որով հավանական է հարկվող շահույթի առկա լինելը, որի դիմաց կարող է օգտագործվել ժամանակավոր տարբերությունը, և որը կմարվի տեսանելի ապագայում:

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Ընկերությունը կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք երևան են գալու կախված այն եղանակից, որով Ընկերությունը հաշվետու ամսաթվի դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները հաշվանցվում են, երբ կա իրավաբանորեն ամրագրված իրավունք՝ հաշվանցելու ընթացիկ հարկային ակտիվները ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց, և երբ դրանք վերաբերում են շահութահարկին, որը

զանձվում է նույն հարկային մարմնի կողմից, և Ընկերությունը մտադիր է գուտ հիմունքով մարել ընթացիկ հարկային պարտավորություններն ու ակտիվները:

3.9 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Ընկերությունը ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և եթե հավանական է, որ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե դրա ազդեցությունը զգալի է, ապա պահուստը որոշվում է ապագա դրամական արտահոսքերի գեղջման միջոցով՝ օգտագործելով մինչև հարկունը տոկոսադրույքը, որն արտացոլում է դրամի ժամանակային արժեքի վերաբերյալ շուկայի ընթացիկ գնահատումները և, կիրառելիության դեպքում, պարտավորությանը վերագրվող յուրահատուկ ռիսկերը:

3.10 Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ

Ընկերությունը առաջին անգամ ՖՀՄՍ 15. «Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ» ստանդարտը կիրառել է 2018թ. հունվարի 1-ից: Մի շարք նոր ընդունված ստանդարտներ նույնպես կիրառվել են Ընկերության կողմից 2018թ. հունվարի 1-ից, բայց դրանք էական ազդեցություն չունեն Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

Ընկերության կողմից նոր ընդունված ստանդարտներին անցման հետևանքով պահանջվող համադրելի ֆինանսական հաշվետվությունները չեն վերաներկայացվել:

